

ԳՐԱԿԱՆ**ԱՐՄԻՆԷ ԵՓՐԵՄԵԱՆ**

Երեւանի թիւ 55 հմ/դ, Հայոց լեզուի
եւ գրականութեան ուսուցչուհի

**ՊՈՌՇԵԱՆԻ «ՍՈՍ ԵՒ ՎԱՐԹԻԹԵՐ» ՎԷՊԻ
ՆԱԼՊԱՆՏԵԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Երեւեցաւ նա որպէս զինուած մարգարէ՝
մի ձեռքով ջահ, միւսով՝ սուր:

Ա. Իսահակեան

Միքայէլ Նալպանտեանն այն դասականներից է, որոնք շարունակեցին եւ զարգացրին ինչպիսիք Աբովեանի աւանդույթները: Նրա անուան հետ է կապուած հայ գրականութեան եւ հասարակական-քաղաքական մտքի պատմութեան մի ամբողջ դարաշրջան:

Գրական քննադատութիւնն իբրեւ ուրոյն ժանր իր գիտական, քաղաքական եւ գաղափարական մշակումն առաջին անգամ ստացաւ Նալպանտեանի մօտ: Եւ, իրաւամբ, Նալպանտեանը հանդիսացաւ հայ քննադատութեան հիմնադիրը, թէեւ բաւական լուրջ փորձեր եղել էին նաեւ նրանից առաջ (Նազարեան, Հախումբեկեան, Ոսկան): Սակայն այդ փորձերը վերաբերում էին կա՛մ գրականութեան պատմութեանը, կա՛մ բանասիրութեանը: Հիմք դնելով հայ քննադատական մտքին՝ Նալպանտեանը քննադատութեանը տուեց հասարակական-քաղաքական բովանդակութիւն, դարձրեց առաջընթացի եւ կեանքի վերափոխման գէնք: Նրա ըմբռնմամբ քննադատութիւնը պէտք է հանդէս բերի կեանքի ճշմարտութիւնը, ամեն ինչ ենթարկի կրիտիկայի դաժան քննութեան¹: «Մի ազգի մատենագրութեան մէջ երեւում է նորա հոգին, նորա հայեացքը, նորա ընկերական կեանքը, բայց կրիտիկայի մէջ երեւում է այս բոլորի չափը և աստիճանը, սորա գործն է սահմանել եւ գնահատել նորանց: Այն ազգը, որը չունի կրիտիկա, չունի եւ մատենագրութիւն. մատենագրութիւն առանց կրիտիկայի, միեւնոյն է, ինչպէս մարմինն առանց հոգու. իսկ այն ազգը, որ չունի մատենագրութիւն, ասել է թէ չունի եւ բանականութիւն, որովհետեւ մատենագրութիւնը այլ բան չէ, եթէ ոչ բանականութեան արձանագրութիւն: Մատենագրութիւնը մի յիշատակարան է, մի պահարան, ուր ամփոփում են մարդկային բանականութեան վաստակքը, մարդկային հոգու բղիսուածքը...»²: Գրականութիւնը նա ըմբռնեց իբրեւ կեանքի արտայայտութիւն, որը կեանքը արտացոլելով հանդերձ՝ իբրեւ ապոլոնեան հայելի, պէտք է ներգործի նրա վերափոխման վրայ: Նա առաջինն ըմբռնեց ռուս գրականութեան առաջնակարգ նշանակութիւնը եւ մատնացոյց արեց այդ գրականութիւնն (Պուշկին, Լերմոնտով, Գոգոլ) իբրեւ ուղենիշ հայ գրականութեան համար:

¹ Տե՛ս Բագեան Ս., Միքայէլ Նալպանտեան, Եր., 1955, էջ 143:

² Հայ գրական ֆնմադատութեան ֆիլսոփմատիա, Եր., 1981, էջ 406-407:

«Կրիտիկա Սոս եւ Վարդիթերի» աշխատութիւնը գրել է բանտում, 1864թ. (յօդ-ւածը ամբողջութեամբ հրատարակուել է Նալպանտեանի «Անտիպ երկերում», 1935թ., Աշ. Յովհաննիսեանի ընդարձակ ծանօթագրութիւններով, որն այդ յօդուածը գը-տել էր III Բաժանմունքի արխիւներում): «Հիւսիսափայլ»-ում տպել տալու համար ներկայացուած այս գործը III-րդ բաժանմունքը պահեց Նալպանտեանի մեղադրական գործերում: Նալպանտեանի «Կրիտիկա Սոս եւ Վարդիթերի» յօդուածը շատ է դուրս գալիս սովորական գրախօսութեան շրջանակներից:

Իր «Կրիտիկա Սոս եւ Վարդիթերի» յօդուածը Նալպանտեանը սկսում էր հէնց հայ ժողովրդի մշակոյթի մէջ այդ կարեւորագոյն փաստի հաստատումով. «Մենք պար-տականութիւն ունինք հրատարակել, թէ պ. Աբովեանցի «Վերք Հայաստանին» եւ «Սոս եւ Վարդիթերը» հիմք դրին արդեան ազգային վիպասանութեան»³:

1860 թուականին Թիֆլիսում առանձին հրատարակութեամբ լոյս է տեսնում Պ. Պռոշեանի «Սոս եւ Վարդիթեր» վէպը: Հեղինակն իր առաջաբանն այսպէս է աւար-տում. «Մեծ յոյս ունիմք, թէ ազգը կ'ընդունի «Սոս եւ Վարդիթերը», որպէս մի տկար պատանու նուաստ երկասիրութիւն եւ հայրաբար ներողամիտ կը լինի նա սորա միջի բազմապատիկ թերութիւններին»⁴: Եւ, իսկապէս, կողմնապահութեան կարիք չկայ: Համարձակ կարող ենք ասել, որ «մեծարգոյ հեղինակը իր նկարագրած կեանքի վերաբերութեամբ, ոչ աւելի ու ոչ պակաս, մի անխարդախ հայելի է, ուր ցոլանում են բնութեան ճառագայթքը: Պ. Պռոշեանցը պրծաւ իր պարտքից. այժմ մերն է կարգը նորա համար հայելի դառնալ եւ ցոլացնել հեղինակին նորա սեփական գործը. այս իր տեսակի ճառագայթների կրկին բեկբեկումն է»⁵:

Մեր աշխատանքի նպատակը Պ. Պռոշեանի «Սոս եւ Վարդիթեր» վէպի նալպան-տեանական գնահատումը ցոյց տալն է:

Հստ Նալպանտեանի՝ բարեխիղճ կրիտիկոսը պէտք է նշի ոչ միայն գրական եր-կի թերութիւնները, այլեւ երեւան հանի այն արժանիքները, որոնք անտես են մնում ընթերցողների կողմից, ցոյց տալ այն արժանիքները, որ արթնացնում ու ջերմացնում են ընթերցողի հոգին ու սիրտը: Արժանապէս գնահատելով որեւէ գործ՝ կրիտիկոսը սրբում է աշխատողի ճակատի քրտինքը եւ քաջալերում է նրան, առիթ է տալիս հեղինակին ուղղելու եւ կատարելագործելու իր գործը:

Իր կրիտիկայի սկզբում Նալպանտեանը գրում է «Սիրական եղբօր, Խ. Պ. ՕՏ... Ին նուէր»: Ժամանակակիցներից մէկի վկայութեամբ Մ. Նալպանտեանը Կ. Պոլիս այցելելիս հյուրընկալուել է Օտեանների տանը: Այդ թուականներին Օտեանների գերդաստանից յայտնի դէմք էր Գր. Օտեանը, որը աշխատակցում էր նաեւ «Մեղու»-ին՝ գրելով լիբերալ ուղղութեամբ յօդուածներ: Կայ նաեւ վկայութիւն, որ Նալպանտեանը անձամբ ծանօթ է եղել Գր. Օտեանին: Նալպանտեանը իր սոյն կարեւոր աշխատութիւնը նուիրել է Գր. Օտեանի եղբօր՝ Խաչիկ Օտեանին (Երուանդ Օտեանի հայրը): Խաչիկ Օտեանը գրականութեամբ չի զբաղուել: Թէ ինչու է Նալպանտեանը նրան նուիրել այս աշխատութիւնը, յայտնի չէ:

«Կրիտիկա. «Սոս եւ Վարդիթեր»-ի քննութեան մէջ Նալպանտեանը գրում է, որ կողմնապահութեան կարիք չկայ, պէտք է անաչառ ձեւով կարծիք ասել այս գործի մա-սին. «...այնքան զուտ եւ անհակառակելի արժանաւորութիւն կայ «Սոս եւ Վարդիթե-րի» մէջ, որի այս ու այն տեղ, այս ու այն կողմից երեւցած թերութիւնքը, հեղինակի անուշադրութիւնքը մի փոքր էլ հեղինակին շրջապատող աշխարհի ազդացքը, եթէ նաեւ ամենայն խստութեամբ դրուին անդամահատական դանակի տակ, այնուամենայնիւ,

³ Նալպանտեան Մ., Երկեր, Եր., 1985, էջ 524:

⁴ Պռոշեան Պ., Երկերի ժողովածու, Հատոր առաջին, Եր., 1962, էջ 53-54:

⁵ Նալպանտեան Մ., նշում աշխ., էջ 526:

գործի ընդհանրական ամբողջությունը եւ էական արժանաւորությունը կը մնայ ու կը մնայ: Եւ, որուհետեւ այս կողմից երկիւղ չկայ, որովհետեւ մեր անաշառ քննությունը բնաւ երբեք չպիտի նսեմացնէ նորա արժէքի եւ քանքարի փայլը, այս պատճառով մենք հաստատ որոշում ենք ամէն նորա արժանաւորությունը խոստովանելով, տեղ-տեղ երեւցած անհարթությունները չմոռնալ»:⁶ Առաջին հերթին այս վէպը Նալպանտեանը դիտում է որպէս բանաստեղծություն, որտեղ բանաստեղծը խոսում է բնութեան լեզուով, որտեղ դառնում է բնութեան թարգման: Այս տեսանկիւնից տեսնում ենք գործի արժանիքները, բայց երբ հեղինակը օգնություն է խնդրում երեւակայությունից, ստեղծում է անբնական բաներ, այդտեղ գործի արժէքը անհամեմատ թուլանում է: Հեղինակի ոսկեդարեան անմեղությունը փայլում է վէպի ամեն տողի մէջ. «Այդ մի շատ բնական գործ է եւ իր պարզութեամբ աւելի նմանում է այն փարելի բնական աղբիւրներին, որոնց ջուրը առանց մարմարոնեան շատրուանների եւ հոովմէական ազուգաների վազում է սարի լանջով եւ իր գնացքի մէջ, իր դիպած ամեն մի խոտի, ամեն մի թփի տերեւները պսակում է ազամանդեայ կաթիլներով»:⁷

Հետաքրքիր է նաեւ այն, որ «Սոս եւ Վարդիթեր»-ի մէջ կեանքը հասարակաց է, հեղինակի գլխաւոր գաղափարը Սոսը եւ Վարդիթերը չեն: Այս գործը կարգալիս ընթերցողը չի կենտրոնանում միայն Սոսի եւ Վարդիթերի վրայ, տեսնում է ընդհանուրի կեանքը, աւանդությունների, սովորությունների եւ ծէսերի կենդանի նկարագրություններ, նոյնիսկ ստեղծում է այնպիսի տպաւորություն, որ Սոսը եւ Վարդիթերը վէպում որպէս օգնականներ են հանդէս գալիս: Հէնց այս փաստն էլ վկայում է այն մասին, որ այս վէպը չի կարելի համարել «սիրապատում վիպասանություն»:

Մեր աշխատանքի մէջ առանձնացրել ենք կարեւոր եւ անկարեւոր թերություններ, որոնք ցոյց կը տանք համապատասխան օրինակների հիման վրայ.

Վէպում Վարդիթերը հանդէս է գալիս որպէս «մի էրուած սիրուհի», որի սէրն արդէն երկու տարի է, որ մաշում է նրա սիրտը եւ հոգին, եւ սա այն ժամանակ, երբ Վարդիթերն ընդամենը «դեռ նոր է փոխել ատամները, դեռ նոր է մտել տասնութի տարեկանութեան մէջ: Սորանից եթէ երկու տարին էլ հանենք, այն ժամանակ կը տեսնենք, որ Վարդիթերը ութը լման իննի մէջ զգացել է սիրելու կրակը»:⁸ Այստեղ երեւում է այն հակասականությունը, որը բնորոշ չէ այն տարիքին, ինչ տարիքում գտնւում է Վարդիթերը: Իր տարիքին համապատասխան չեն նաեւ նրա խելացի դատողությունները, կանացի խորագիտությունը, գիտակցաբար մինչեւ անձնագոհութեան աստիճանի բարձրանալը, որոնք ընթերցողին յայտնի են դառնում վիպական հետագայ գործողությունների ժամանակ:

Կամ ուշադրություն դարձնենք հետեւեալին. տասնմէկ տարեկան աղջիկը ընկնելով սիրեկանի գիրկը եւ համբուրուելով՝ նրանից զգում է, թէ «օխտը թիզ եղ է կանգնում նորա սրտին»: Սա եւս հակասում է նրա տարիքին: Անբնական է նաեւ, որ Վարդիթերի հայրը՝ Հեթումը, անատամ ծերունի է, իսկ նրա մայրը՝ պառաւ: Բաւական չէ, որ այս ծերունիները տասնմէկ տարեկան աղջիկ ունեն, դեռ նրանից յետոյ էլ ծնել են Փափակին:

Կարեւոր թերություն է նաեւ Արշալիրի բնաւորութեան հակասականությունը: Այս մարդը, որ սկզբից մեծ սիրով էր ընդունում Սոսի առաջարկությունը, երդւում էր, որ իր քրոջը նրա հետ է ամուսնացնելու, յանկարծ փոխում է եւ դառնում Սոսի մահաբեր թշնամին: Գործի բովանդակութեան մէջ չկայ մի հատուած, ուր խօսուի նրա դաւաճանութեան մասին, երդման դրժողութեան մասին: Փափակի յայտարարությունից ենք իմանում ամեն ինչ. «Գիտե՞ս ինչ կայ,- ասում է նա Գարեգինին,- բանը փոխուեց,

⁶ Նոյն տեղում, էջ 526:

⁷ Նոյն տեղում, էջ 527:

⁸ Նոյն տեղում, էջ 529:

ճար ունիս տես. Արշալուրի միտքը ընչանք հիմի թէ ծուռն ա էլել, թէ դուզ ա էլել ձեր հետ, չեմ իմանում, համա հիմի իմացուեց. էրեկուանից դեսը հարիր հետ կռիւ ա քցել, թէ կամ թուրը վեր կ'ունիմ ինձ կը սպանեմ, կամ թէ չէ Սոսին աղջիկ չեմ տալ. ես պիտի տամ Զայրմայրի էջմիածնեցի քաւորին» (էջ 533. Այսուհետեւ բոլոր մէջբերումներն արուելու են Միքայէլ Նալպանտեան, Երկեր, Երեւան, 1985 թ. գրքից, այդ իսկ պատճառով մեր շարադրանքում փակագծերի մէջ կը նշենք միայն համապատասխան էջերը):

Փարպի գնալու ժամանակ Վարդիթերի մայրը՝ Համասփիւռը, հրապարակաւ յայտնում է իր տհաճութիւնը Սոսի հետամտութեան վրայ. «Մտիս տախտակն եմ դադել», - ասում է նա ուխտաւորներին եւ սպառնում է, որ իր աղջկան Սոսին չի տալու: Իսկ Վարդավառին Համասփիւռը հրաւիրում է Սոսին եւ ուխտի հրապարակում՝ Հանա վանքում, համբուրել է տալիս Վարդիթերին, նշան է դնում: Այս երկու օրինակները վէպի թերութիւն չենք համարում, քանի որ սրանք կարող ենք վերագրել Համասփիւռի անկրթութեանը, որի պատճառով ամեն բան հնարաւոր է առաջանայ, սրանք աւելի շուտ կարող ենք համարել իբրեւ «բնական հակասութիւններ»: Բայց անբնական հակասութիւն է այն, որ Համասփիւռը Փարպիի ճանապարհին նախատում է իր դստերը, խայտառակում է ամենքի առջեւ՝ յայտնելով, թէ երիտասարդ տղաների ձի խաղացնելը, տաղ ասելը եւ Վարդիթերենց խմբից չհեռանալը Վարդիթերի արածն է. «Զէք իմանում, - ասում է նա իր ուխտակից կին մարդոցը, - էս մեր փշացածի (Վարդիթերի) արածն ա ֆումա... Խաչն իմն ա, փյաւամաթը (գորութիւնը) ես գիտեմ» (էջ 534): Իսկ սրանից մի քանի վայրկեան առաջ էլ Վարդիթերի վրայ է թափում իր ժանգը. «Ա՛խ, ծակծակոտուած, սրտի աղջիկ. ի՞նչ անեմ, խաւարեւ էմ օրը, որ դու լիս ընկաւ. էմ ֆշերը հերդ ջաղացն էր գնացել. ի՞նչ կ'լնեւ» (էջ 534): Համասփիւռի արարքը հակասում է Աշտարակի ընդհանուր կեանքին, հայ կանանց ընտանեկան ու որդիական պատուապահութեանը, եւ սա այն դէպքում, երբ Համասփիւռը վէպում նկարագրւում է որպէս խորագէտ կին. «Սատանի հետի ոտն էր պառաւը», - ասում է հեղինակը:

Վէպում Գարեգինը շատ է գովուած, նրա գործերը գովեստի չափով չեն. հեղինակը իր կողմից խօսելով հակամէտ է զարդարել նորա գլուխը, բայց ինքը՝ Գարեգինը, իր ներգործութեամբ դաւաճանում է հեղինակին եւ շատ տեղ երեւում է ոչ աւելի, քան թէ մի խեղճ տիրացու: Վէպի շատ գործողութիւններ տեղի են ունենում Գարեգինենց տանը, բայց Գարեգինի տան մասին շատ քիչ բան ենք իմանում վէպից: Երեւում է նրա մայրը, եղբօր անունն ենք իմանում միայն, իսկ հարսի անունը չի էլ նշուում: Նոյնպէս Սոսի մեծ եղբայրը՝ Պարետը, հագիւ մի երկու անգամ է հանդէս գալիս, նրա կինն ընդհանրապէս չի երեւում, իսկ փոքր եղբայրը՝ Արշամը կամ Գեղամը, մի երկու անգամ երեւալուց յետոյ, իր պաշտօնն աւարտում է այգում (արաղ քաշելու երեկոն):

«Արշամը, - գրում է Նալպանտեանը, - իր սերունդի երեւեցուցիչն է... ափսոս, որ շատ քիչ հանդէս ունի «Սոս եւ Վարդիթերի» մէջ այն ուղղութիւնը, որ երեւում է Արշամում, թէ եւ այս չափից էլ տեսնում ենք կենարար սկեպտիցիզմի արած ազդեցութիւնը: Մենք աջողութիւն եւ ընթացք ենք մաղթում այդ երկնային դեսպանին»⁹: Արշամի միջոցով Պոռշեանը ցոյց է տալիս «նոր սերնդի սկեպտիկեան ուղղութիւնը»: Սրանով նա նկատի ունի այն մտահայեցութիւնը, որ առաջնորդում էր հայ գիւղի զգայուն եւ գիտակից տարրերին դէպի քաղաքական ազատութեան նախադուռ՝ ազդանշելով Հայաստանի գիւղացիութեան մէջ հասունացող ռեւոլյուցիոն տրամադրութիւնը, նրա մէջ խլրտացող ռեւոլյուցիոն զարթոնքն ու ինքնագիտակցութիւնը: «Այս իրական աշխարհում, - գրում էր նա բերդում, - այս անողորմելի դարում... թագաւորը չէ մի որպիսի եւ իցէ քնաբեր նանիկ, այլ այն արգասաւոր սկեպտիցիզմը, որ վերացնում է

⁹ Յովհաննիսեան Աշ., Նալպանտեանը եւ նրա ժամանակը, Գիրք երկրորդ, Եր., 1956, էջ 532:

մարդկային մտքի ամլութեան նախատինքը»¹⁰։ Նալպանտեանը հաւատում է սպասում էր գիւղի ռեուլիցիոն զարթոնքին, նշմարում էր դրա նախանշանները։

Մինչեւ այժմ նշուածները կարող ենք համարել վէպի կարեւոր թերութիւններ, բայց վէպում կան այնպիսի հատուածներ, որտեղ երեւում է գրողի անուշադրութիւնը, սակայն հարկ չենք համարում դրանք նշել որպէս վէպի կարեւոր թերութիւն։ Օրինակ՝ Սոսի եղբայրը երբեմն անուանւում է Գեղամ, իսկ երբեմն Արշամ, կամ Հեթումը երբ խօսում է Սոսենց մասին, մի անգամ նշում է, որ նրանք երեք եղբայր են, իսկ մի ուրիշ անգամ՝ չորս։ Սրանք թերութիւններ չենք համարում, քանի որ վիպական գործողութիւնները վնաս չեն կրում։ Գեղամ է եղել Սոսի եղբօր անունը, թէ Արշամ, երեք եղբայր են եղել, թէ չորս, դրանից կեանքն այլ ընթացք չի ստանում։

Ի հակադրութիւն այս օրինակների՝ թերութիւն ենք համարում Գարեգինի ձու նկարելը. «Մենք ասելիք ունենալու չէինք, եթէ, գլուխը քարը, լոկ մի խոսք կամ մի նշան գրեւնա ձուի վրայ, կամ շատ-շատ որեւիցէ անցքի միայն մի մոմենտը նկարեւ, բայց դու, կրակը տես, որ պատկերների բովանդակութիւնը այնպիսի բազմապարունակութիւն է այնպիսի փոփոխական է շարժում տեսարաններ է ստանում, որ տասը պատկերի միւս կը լինի, որոնց խօսքերով միայն ստորագրութիւնը ամբողջ երեսից աւելի է» (էջ 536)։

Վէպի արժանիքը թուլացնում են նաեւ

ա) այն **երազները** (ընդգծումը մերն է), որոնք աւելորդ նորամուծութիւն են վէպում, կարծես սրանով հեղինակի ուժը կոտորւում է. երբ Սոսը Պարետին պատմում է իր սիրահարուելու մասին, ասում է, թէ երազում է սիրահարուել Վարդիթերին։ (//Խ. Աբովեանի «Վերք Հայաստանի» վէպի մէջ Մուսայի՝ Հոփսիմէին սիրահարուելը, որին ոչ տեսել է, ոչ էլ ճանաչում է)։

բ) վէպում կան տեղեր, ուր **Ֆատալիզմը** (ընդգծումը մերն է) ազատօրէն է հանդէս գալիս. Սոսին է Վարդիթերին միեւնոյն վիճակախաղքն է դուրս գալիս, որ գուշակում է նրանց գլխի գալիքը։ Կարելի կը լիներ ասել, որ սա պատահմունք է, եթէ հեղինակը այդ վիճակները հանելուց առաջ չտեսնէր Սոսի է Վարդիթերի գլխին պատրաստուող փոթորիկը, եւ սա դեռ բոլորը չէ. «...Համա, խեղճ տղայ, զուր ես քեզ տրորում. ինչ կարծես կարծի, էդ մի կարծիլ, աստուած դրան քեզ համար չի ստեղծել... ինչ գրուել ա էն պտի ընիլ. նակատի գրուածը ջնջուիլ չի» (էջ 537)։

Նալպանտեանը գրքի թոյլ տեղը համարում է նրա եզրափակիչ մասը. «Անցքի կատաստրոֆը (ընդգծումը մերն է), որ ամեն իրատւնով պահանջում է հեղինակից աւելի հմտութիւն ու ճարտարութիւն, ուր պիտի որ գործի ամբողջ ընթացքի մէջ լարուած թելերը աւելի ճարտարութեամբ, աւելի հնարագիտութեամբ եւ որ գլխատուն է աւելի բնականութեամբ միանան, հաւաքուին եւ կենտրոնանան, ինչպէս արեւի ճառագայթքը անցնելով մի ոսպնածեւ ապակուց, որ իսկոյն կրակեն,- այդ կատաստրոֆը, եթէ համեմատում ենք գործի ընդհանուր արժանատիւութեան հետ, շատ թոյլ է կերպարանագործուած. ոչ միայն այսչափ, այլեւ անբնական»¹¹։ Վէպն աւարտւում է սիրահարուած երիտասարդների մահով, որոնք զոհ են դառնում վայրի սովորոյթներին։ Բայց հերոսների մահուան բուն նկարագրութիւնն անբնական է եւ աւելի շուտ հէքիաթ է յիշեցնում, որը, իհարկէ, թուլացնում է վէպի բուն ողբերգական հանգուցալուծումը։

Անբնական է այն, երբ Վարդիթերը, որպէս տասնմէկ տարեկան աղջիկ, կաթածահար է լինում, անբնական է նաեւ այն, որ «կաթուածից հոգեվարժ ապրող մարդը ցոյց է տալիս ուղեղի ու ջլերի անխտոր եւ առողջ պաշտօնակատարութիւն» (էջ 542)։ Եթէ նրա ուղեղն այնպիսի վիճակում է, որ նա հանգիստ խօսում է, մտածում է, յիշողութիւնը չի կորցնում, աչքը տեսնում է, ականջը լսում է, էլ ինչ պատճառից է մեռնում։

¹⁰ Նալպանտեան Մ., Երկերի լիակատար ժողովածու (հ. III), Եր., 1979, էջ 328։

¹¹ Նալպանտեան Մ., Երկեր, Եր., 1985, էջ 540-541։

Անդրադառնանք Սոսի կերպարին. Սոսը շատ կեղծ վիճակում է գտնուում: Գըլ-խաբաց, ոտքը բոբիկ ման է գալիս երեք գազ ձեան մէջ Արագածի զառիվայրում: Զրուժ լողանում է, աղուեսների եւ գայլերի հետ է կռիւ տալիս, եւ չնայելով, որ նա աւելի շատ մահ է փնտռում, ոչ թէ կեանք, այնուամենայնիւ չի մոռանում իր կեանքի պահպանութեան հոգսը. «Խոտի ֆոֆերը ձնի տակից հանելիս ու ծամելիս տեսնում եմ նրան ապարանցի»։ Երկու շաբաթ յետոյ նրան տեսնում է Գարեգինը, խրատում, համոզում է տուն դառնալ։ Անբնական է, որ այդ երկու շաբաթուայ ընթացքում, այդ ցրտին, ձեան մէջ, սառը ջրում լողանալով, սառույցի վրայ թեք ընկնելով», սոված եւ ծարաւ, նրա երեսի գոյնն անգամ չի թռչում, նրա առողջութիւնը բնաւ չի սասանում, իսկ երբ տանը նստած լսում է Վարդիթերի մահուան լուրը, խոր հոգոց է քաշում, մէջքի վրայ հետ գնում, գլուխը Գարեգինի ձեռքի վրայ դնելով խնդրում է, որ աշխատի իրենց երկուսին (իրեն եւ Վարդիթերին) իրար մօտ թաղել տայ, իր մօրը մխիթարի, եղբայրներին մնաս բարով ասի, ինքն էլ ուրախ մնայ, յետոյ աչքերը վերեւ է բարձրացնում, աղօթք անում ու հոգին աւանդում։ Իրար մօտ թաղելու մասին խօսում է նաեւ Վարդիթերը, երբ դեռ Սոսը մեռած չէր։ Տապանագիրը դնում է Գարեգինի անտէր ողբը, որ շատ ընտիր է, կարճ եւ ազդու.

**«Ահա սիրոյ պտուղներ,
Մի ազահ մարդի զոհեր,
Ով ըստեղից անց կենայ
Յիշի Սոսն ու Վարդիթեր»։ (էջ 543-544)**

Վէպի մէջ չկայ գէթ մէկ անխորհուրդ ու անյաջող ոտանաւոր։ Պատճառը շատ բնական է. գործը հեղինակի մտքում եւ սրտում արդէն վերջացած է, «...նորա ոգին էլ բան չունի այս գործի հետ, բայց երբ բռնադատում ես գրիչը ինչ որ լինի մի բան գրել, յայտնի բան է, որ Գարեգինի ողբի պէս բան կլինի» (էջ 544)։

Վէպում կայ նաեւ մի կերպար, որի մասին նոյնպէս պէտք է խօսենք։ Խօսքն Անուշի մասին է։ Անուշի մասին մենք շատ քիչ բան ենք իմանում, ընդամենը երկու-երեք անգամ ենք տեսնում, նրան լսում ենք Ծաղկազարդի օրը եկեղեցում, երբ Վարդիթերին Սոսի անունից գաթայ ու մանուշակներ էր տարել։ Սրանից աւել ոչինչ չենք իմանում նրա մասին, քանի որ Պռոշեանը, աւելի շատ կենտրոնանալով գլխաւոր կերպարների վրայ, մնացած կերպարների մասին շատ քիչ տեղեկութիւններ է տալիս։ Ծիշդ է, այդ-քան քիչ բան ենք իմանում նրա մասին, բայց նրա կերպարի մէջ տեսնում ենք մի հայ աղջկայ։ Այսպէս, Սոսը նրան խնդրում է Ծաղկազարդի օրը իր քաղած մանուշակները տալ Վարդիթերին։ Անուշը սրտով ուզում է կատարել իր ազգականի խնդրանքը, բայց սեփական ամօթխածութիւնը նրան ստիպում է տատանուել. «Լաւ, տո՛ւր տեսնեմ, - ասում է նա Սոսին, - վա՛յ թո՛ւ ու բեղմամ ըլնիմ ես, տեսնեմ երեսս կը բռնի՞, որ ասեմ Սոսն ա դրկել, համա թէ որ խոռվի, չի առնի, յետոյ արի, էշը ցեխից դու հանա՛, փալանը դու դգի, նոխտեն դու գլուխը տուր, էլ ինձանում մեմֆ չկայ» (էջ 579)։

Եկեղեցում երկար-բարակ Վարդիթերի հետ մտերմաբար խօսելուց յետոյ երբ Անուշը Վարդիթերին յայտնում է մանուշակների մասին, ասում է, որ ինքը չէր յօժարում կատարել այդ յանձնարարութիւնը, վախենում էր, որ միգուցէ նրա սիրտը կը ցաւեցներ։ Վարդիթերը թէեւ սաստիկ ուրախացել էր եւ չէր իմանում ինչպէս վերջներ մանուշակները, այնուամենայնիւ, կանացի խորամանկութեամբ նոյն վայրկեանին իր սիրտը չի բացում Անուշի առջեւ. «Քա՛, ինձ տուր, ես ֆո աղպոր դարաւաշն եմ (աղախին), - ասում է նա, - նրա ազիզ խաթեր համար թէկուզ ֆարափիցն էլ վեր կ'ընկնիմ, ջուրն էլ կ'ընկնիմ, հուրն էլ. նրա հրամանը կատարելու համար վեր կ'առնեմ ամեն թո՛ւ ու մուրն էլ» (էջ 579)։ Բայց մի քիչ յետոյ իր սիրտը կատարելապէս բանում է Անուշի առջեւ, խնդրում է Սոսին հասցնել իր գաթան, ասում է, որ ինքը հաստատ է իր սիրոյ մէջ, խնդրում է, որ Սոսն

էլ խօսքին հաստատ մնայ. «համա, իմ աղլուխը քու գլուխը, ես տղայ դու աղջիկ, թէ որ ինձանից հետ կաննես», -ասում է նա Սոսին Անուշի բերանով:

Իսկապէս, շատ հաճելի է ականջին, երբ լսում ենք հայկական անբռնադատ խօսքը, երբ այդ ձայնը դուրս է գալիս ազգի սրտից, երբ թունաւորուած չէ արուեստական բարոյականութեամբ:

Ծաղկազարդի կիրակին մեծ յաջողութիւն է բերել հեղինակի գրչին: Եկեղեցու մէջ ժողովրդի նկարագրութիւնը, «Փառք ի բարձունս»-ը, տղոց ճեռ ու ճոճանակները, պառաւների բարձրախօս աղաղակը, երիտասարդ տղոց աղջիկ տեսնելու համար ժամի դռանը հաւաքուիլը, սրանք բոլորը շատ գեղեցիկ եւ պատուական նկարագրութիւններ են:

Սրտառուչ ձեւով է նկարագրուած Աշտարակի կանանց ջերմ կրօնասիրութիւնը, ուր տեսնում ենք մանկական պարզամտութիւն, ներողամտութիւն, ուր բարեպաշտ առաքինի հայ կինն իսկոյն ճանաչում է: Փարպի գնալու ճանապարհին, երբ Համասփիւռը բարկացած էր Սոսենց խաղ ասելու վրայ, անէծքախառը խօսքեր է ասում եւ նախատում է Վարդիթերին, ուխտակից կանայք նրա բարկութիւնը անպատշաճ են համարում. «Քա՛, ընչի՞ ես էս բառի լսի առաջին, սուրբ ըխտի նամփին բերանդ փիս բաց անում...» (էջ 580): Այս տողերը կարգալիս տպաւորութիւն է ստեղծում, թէ կենդանի ձայնով լսում ես հայ կնոջ բերանից, որովհետեւ այնքան բնական ու հարազատ են նրա հասկացողութեանը, մտածողութեանն ու տրամաբանութեանը:

Նկարագրելով Աշտարակի մարդկանց բարոյական անմեղութիւնը՝ հեղինակը չի մոռանում խօսել նաեւ նրանց բարոյական խոցերի մասին, չի մոռանում խարազանել նրանց անբարոյականութիւնը: Օրինակ՝ Հեթումը, «այնքան հասած որդոց տէր, այնքան այգիների տէր, ծերացած եւ մի ռաբլ գերեզմանի մէջ», այնուամենայնիւ կապում է ուրիշի այգու ջուրը եւ առու բացում դէպի իր այգին՝ «իմ ողորմածիկ հօրիցը էս եմ տեսել ասելով», մինչդեռ ջրի հերթն իրենը չէր, այլ իր խեղճ հարեւանինն էր: Հարեւանը տեսնում է նրա արածը եւ բողոքում է, իսկ Հեթումը նրան այսպէս է պատասխանում. «որդի՛, քո արեւը, ես խաբար չեմ, կ'ընի որ ջուրն ինքն ա ծակել» (էջ 582): Խեղճ հարեւանը գիտի, որ Հեթումը սուտ է խօսում, աղաչում է նրան. «Հեթում ասիւն, -ասում է ողորմելին,- քեզ արհայտութիւն ընի, կտրես ոչ. ինչ ունիմ չունիմ չորացել ա» (էջ 582): Բայց չնայելով այս բոլորի վրայ՝ հարեւանի հեռանալուց յետոյ Հեթումը նորից քանդում է ջրի ճանապարհը եւ հարեւանի ջուրը կտրում: Հեթումի այս անիրաւ արարքի ժամանակ հեղինակը Փափակին ուղարկում է, որ հօրն իմաց տայ Վաղարշակենց Արշակի մեռնելու մասին: Պարզ է, որ հեղինակը կրօնաբար է ուզում ազդել Հեթումի նման մարդկանց քարացած խղճմտանքի վրայ, կամ էլ գոնէ բարոյապէս, երբ յիշեցնում է նրանց աշխարհի երեսին մահ լինելու մասին: Նոյնպէս Բագրատ աղան, որ Սոսի անունով երեք ոչխար է առնում թուրքից, Սոսին միայն մէկն է ցոյց տալիս, եւ դա էլ հերիք չէ, պահանջում է, որ այդ մէկն էլ մենակ չուտի, այլ իրեն ու տանուտէրին (թոխվա) էլ հրաւիրի: Ազնիւ երիտասարդը հասկանում է ամեն ինչ, շատ մեղմ ձեւով խայտառակում է Բագրատ աղայի խաբեբայութիւնը եւ նենգութիւնը: Նա այդ մէկից էլ է հրաժարւում՝ ասելով. «շնորհակալ եմ, աղայ՝... էն մի ոչխարն էլ քեզ բաշխեցի, թող ասեն ոչ, Սոսը իր օրումը կաշառֆ ա կերել» (էջ 582):

Աշտարակ գիւղի տնտեսութեան մասին մենք լսում ենք մի պարզ ու սրտաշարժ խօսակցութիւն: Դառը բողոք է լսում Վայկունի բերանից. «Մեր գեղի ամեն բանն էլ լաւ ա, ասիսու որ քեթիւտեմն ու տանուտէր մի քիչ շահասէր են...» (էջ 583): Մենք տխրում ենք, երբ տեսնում ենք, թէ ինչպէս է հարստահարուած երկրագործը կամ շինականը բռնադատուած լուռ մնում եւ միայն գիշերով, ծածուկ, խորհրդական առանձնութեան մէջ բողոքում, երբ ոչ ոք չի լսում նրա բողոքը: Սոսի կարծիքը այս տեսակ ազգային կառավարիչների մասին ընդունում ենք որպէս մի շար երգիծաբանութիւն. «Այ տղայ,

ի՞նչ ես խալիսի ոտը փաշում, Վայկուն,-ասում է Սոսը,- էդ ո՞ր գեղումը չի մասրափ ըլնիլ . մի մոլորով կամ եսաուլ, որ գալիս ա բա նրան հաց չի՞ պէտք, պատիւ չի՞ պէտք, հաւի միս չի՞ պէտք, գառը, գինի, արաղ չի՞ պէտք...» (էջ 584):

-Սո՛ւ ջան,- պատասխանում է Վայկունը,- էդ դրուստ ես ասում, համա ինչքան էլ որ ըլնի, էդքան շատ մասրափ խառչ չի ըլնիլ. սրա միջին մեր իշխաններն էլ են շահում:

-Վայկուն ափոր խօսքերն Աւետարանի կողքին գրուած են,- ասում է Արշամը՝ Սոսի փոքր եղբայրը,- սաքի ընչի՞ եմ երկու երեսանութիւն անում, կողմնապան ըլնում. հիմի էս հո մեր պապական հիփին ա, ուզենան կը ծլեն կը տան ուրիշի. քանի՜-քանի՞ օրինակներ կան, որ ընչանք ֆեզնից մի օգուտ չեն ունեցել, բանըդ չեն շինել... (էջ 585):

Այս վէպից իմանում ենք, թէ ինչ ողորմելի վիճակում է գտնուում շերամաբուծութիւնը Աշտարակում: Վարդիթերը թուրի տերերը այգուց առած գնում է տուն, հայրը հանդիպում է նրան ճանապարհին եւ այսպէս է խօսում. «էդ տերերը ո՞ր ծառիցն ա, էն կարմիր կորիզաւոր թթնուցը հո չի՞»:

-Ձէ՛,- ասում է աղջիկը,- սպիտակ բեղամա թթնուցն ա:

-Դե՛, տա՛ր, դե՛, տա՛ր,- շարունակում է Հեթումը,- ճիւղները սոված կոտորուեցին, որդի. շաղ գնալու (բոժոժ դառնալու) վախտն ա, բալի ուտեն ռադ ըլնին կորչին. ծառերս վերջ արին էլի. բարով էկող տարի հասնենք, մէ մերըդ մին էլ բոնի՝ պարծենայ (էջ 589):

Մեր աշխատանքի մէջ անդրադարձել ենք նաեւ Պոռշեանի լեզուին, ոճին, նրա ծանօթագրութիւններին:

Հեղինակի լեզու ասելով տուեալ դէպքում չենք հասկանում Աշտարակի բարբառը, որով գրուած է վէպը: Հեղինակը ցանկացել է իր գործը այդ բարբառով գրել, որ կարգացողը ոչ միայն Աշտարակի վարք ու բարքի, այլ նաեւ նրա լեզուի մասին էլ տեղեկութիւններ ստանայ, որը ոչ թէ մեղադրելի է, այլ ընդհակառակը, արժանի է շնորհակալութեան: Եթէ ցանկալի է նոր լեզուի համազգային միութիւնը, ուրեմն պիտի ուրախութեամբ ողջունել գործը, որը գրուած է որեւէ գաւառական բարբառով, քանի որ նոր լեզուի մշակումը, նաեւ ապագայ միութեան գաղափարը առանց այդ գաւառական բարբառների օգնութեան աներեւակայելի է: Ստրկանալով հին լեզուին՝ լեզուի նոր ծլած ձեւերը, որ դեռ թարմ են, կապելով եւ ճնշելով անցածի եւ մեռածի պատանքի մէջ, նոր լեզուի մշակման գաղափարը ազգի համար դառնում է ամուլ եւ անպտուղ: Բայց ասուածը չի նշանակում, թէ հին լեզուի լծից ազատուելով նոր լեզուի մշակումը պէտք է դնել այս կամ այն գաւառական բարբառի լծի տակ: Գաւառական բարբառը ազգի համար գործնական արժէք չունի: Նոր լեզուն պիտի մշակուի ինքնուրոյնաբար՝ առանց գաւառական բարբառների կամ օտար լեզուների ազդեցութեանը ստրկանալու:

Ինչ վերաբերում է Պոռշեանի ծանօթագրութիւններին, ապա դրանք այդքան էլ յաջող չեն: Օրինակ՝ խօսելով հարսանիքի, որսի եւ մենամարտութեան մասին՝ հեղինակն այսպէս է ծանօթագրում. «էս որսի սովորութիւնը եւ մենամարտութիւնը կարծեմ մնացած պէտք է լինի մեր նախնի թագաւորների ժամանակից, որ առհասարակ երբեմն-երբեմն զուարճութեան համար անում էին» (էջ 568): Նախ՝ մենամարտութիւնը եւ որսորդութիւնը սեփական բաներ չեն, որ որտեղ տեսնեն, կարծեն թագաւորներից է մնացել: Երկրորդ՝ մեր պատմութեան յիշատակարաններում տեղ-տեղ կարդում ենք մեր թագաւորների որսորդութեան մասին, շատ անգամ նաեւ դատապարտում է նրանց զբօսասիրութիւնը, բայց նրանք արդեօ՞ք մենամարտում էին զուարճութեան համար: Սա առաջին անգամ կարդում ենք Պոռշեանի մօտ: Ենթադրենք, թէ թագաւորները որսորդութեան էին գնում, ենթադրենք, թէ մենամարտում էին զուարճութեան համար, բայց ի՞նչ կապ կայ հարսանեկան արարողութեան սիմվոլիկայի եւ թագաւորական զբօսասիրութեան միջեւ: Պոռշեանը պատմում է, թէ փեսան չէր կարող կերակուր ուտել մինչեւ որսի չգնար եւ որս չբերեր: Փեսան դրանով ապացուցում էր, որ կարող է հոգալ իր ընտանիքի ապրուստի մասին: Բայց իրաւունք չկայ առանց ապացոյցներ

ունենալու՝ ամեն մի հին աւանդութիւն տեսնելով վերագրել թագաւորներին. ազգը մինչեւ թագաւորութեան հասնելը ստեղծում է իր աւանդութիւնները ու ծէսերը, որոնք թէ՛ թագաւորների ժամանակ, թէ՛ նրանցից յետոյ ընկնում են դարերի ազդեցութեան տակ:

«Սոս եւ Վարդիթեր»-ի կրիտիկան նշանաւոր է նաեւ մի այլ տեսանկիւնից: Նալպանտեանն այստեղ շօշափում է արտակարգ կարեւորութիւն ունեցող մի հարց՝ հայ եւ թուրք ժողովրդական մասսաների, սոցիալական եւ քաղաքական բախտակցութեան եւ դրանից արուելիք եզրակացութիւնների հարցը: Վէպում յուզիչ տողեր կան հայ եւ թուրք ժողովուրդների համակցութեան ու եղբայրակցութեան մասին: Նալպանտեանը գրում էր, որ թուրքը եւ հայը այսօր գտնուում են գրեթէ միեւնոյն աշխարհում. այդ ազգերը միեւնոյն հողի, միեւնոյն կերակրի, միեւնոյն բնութեան ազդեցութեան են ենթակայ: Մինչեւ շատ մօտ ժամանակներս, գրեթէ միեւնոյն կառավարութեան տակ էին քաղաքականապէս: Երկուքն էլ ասիացիք, երկուքն էլ արեւելցիք... Ով որ միայն ազգ ազգից բաժանում է անունով եւ կրօնով, այնպիսին չէ կարող մեկնել կամ պատասխանել, թէ ինչ է այն երեւոյթի բնական եւ հոգեբանական պատճառը, որ թուրքը համ է առնում հայի վհատ եւ աղիողորմ խաղերից, տաղերից, ինչպէս եւ հայը թուրքի խաղերից, բայց երկուքն էլ անզգայ Բեթհովենի սիմֆոնիաներին, երկուքի համար էլ Մոցարտի Տոն Ժուանը «ձայն բարբառոյ յանապատի»¹²: Հայ եւ թուրք ժողովուրդների եղբայրակցութեան գաղափարը կարեւոր նուաճում էր հայ դեմոկրատիայի հասարակական եւ քաղաքական մտքի զարգացման տեսակէտից: Ըստ էութեան, Նալպանտեանը շեշտում էր Արեւելքի ճնշուած մասսաների, եւ յատկապէս Թուրքիայում ճնշուած ժողովուրդների մշակութային մերձաւորութիւնը եւ նրանց հակադրում եւրոպական օտարամուտ քաղաքակրթութեանը: Այստեղ նորից երեւում է Նալպանտեանի բացասական վերաբերմունքը դէպի եւրոպական կապիտալիզմը, դէպի նրա բռնարար ու շահամոլ գաղութային քաղաքակրթութիւնը:

«Սոս եւ Վարդիթեր»-ի կրիտիկան առիթ էր տալիս Նալպանտեանին դուրս գալու հայկական գաղթավայրերի՝ Նոր Նախիջեւանի, Մոսկուայի, Փիթերսպուրկի, Կ. Պոլսի եւ Փարիզի շրջանակներից ու փոխադրելու իր ուշադրութիւնը դէպի հայկական բնաշխարհ: Այս վէպի քննարկումը Նալպանտեանին զբաղեցրել էր նաեւ այն պատճառով, որ Պռոշեանի վէպն անդրադարձնում էր արեւելահայ գիւղաշխարհի նիստուկացը, ապրուստն ու յոյզերը:

Այս կրիտիկայի մէջ կան դիտողութիւններ կապիտալիստական քաղաքակրթութեան «նոր բաբելոնների» մասին: Ուշագրաւ են այն տողերը, ուր նկարագրւում են քաղաքներում համախմբուած չքաւորութիւնը եւ դրանից ծայր առնող ֆիզիքական ու բարոյական այլանդակութիւնները, ոճիրների աճը: Կանգ առնելով գիւղական վերնախաւերի մէջ տարածուած բարոյական ախտերի վրայ՝ քննադատը գրում է. «Ազգի այս տեսակ բարոյական խոցերը ոչ միայն կարող են փթթիլ, այլեւ իրենց վարակիչ որակութեամբ շատ կորստաբեր լինել»:

Միանշանակ կարող ենք փաստել, որ այս վէպի էական արժանիքները շատ են եւ շօշափելի: Իր կրիտիկայի վերջում Նալպանտեանը գրում է հետեւեալը. «Մե՞նք հրապարակով, հանդիսաբար յայտնում ենք արգոյ հեղինակին մեր սրտանց շնորհակալութիւնը, աւելի ընդարձակութիւն եւ աւելի կերպարանագործութիւն մաղթելով նորա պայծառ ընդունակութեանը: Մեզ էլ շնորհաւորում ենք հանումի խօսքերով, թէ «Աչիք լիս. փառք աստծու, անշառ, անխաթայ էս հաւկիթն էլ շուտ տուիմք» (էջ 598):

Որպէս ամփոփում՝ նշենք հետեւեալները.

❖ Մեր աշխատանքում ուսումնասիրեցինք Մ. Նալպանտեանի «Կրիտիկա

¹² Յովհաննիսեան Ա., նշուած աշխ., էջ 535:

Սոս եւ Վարդիթեր»-ը, ցոյց տուեցինք Պռոշեանի վէպի նալպանտեանական գնահատութիւնը, վէպի արժանիքները, մասնաւորապէս այն, որ վէպը բնական գործ է, վէպում ներկայացուած կեանքը հասարակական է, ոչ թէ «սիրապատում վիպասանութիւն» է:

❖ Վէպի թերութիւններն առանձնացրինք ըստ կարեւոր եւ անկարեւոր սկզբունքներին:

❖ Որպէս կարեւոր թերութիւն նշեցինք Պռոշեանի կերպարաստեղծման համակարգը, մասնաւորապէս Վարդիթերի, Սոսի անբնական վիճակը, Արշաւիրի բնաւորութեան հակասականութիւնը, Գարեգինի կերպարը, որ շատ է գովուած, Համասփիւռի, Հեթումի, Բագրատ աղայի արարքները, որոնց միջոցով Նալպանտեանը ցոյց է տալիս Աշտարակի հասարակական կեանքի խոցերը, թուացնում էին վէպի արժանիքները: Ի հակադրութիւն սրանց՝ առանձնացրինք Անուշի կերպարը՝ որպէս իսկական հայ աղջիկ: Կարեւոր թերութիւններ են նաեւ երազները, ֆատալիզմը, վէպի կատաստրոֆը:

❖ Որպէս անկարեւոր թերութիւններ առանձնացրինք այն, որ մի տեղ Սոսենք երեք եղբայր էին, մի տեղ չորս, Սոսի եղբայրը մի տեղ հանդէս է գալիս Արշամ անունով, մի տեղ՝ Գեղամ, քանի որ այս աննշան թերութիւնների հետեւանքով վէպի գաղափարական բովանդակութիւնը չի փոխուում, կեանքն այլ ընթացք չի ստանում:

❖ Անդրադարձանք նաեւ Պռոշեանի լեզուի, ոճի հարցերին, նրա ծանօթագրութիւններին:

Այսպիսով՝ «Սոս եւ Վարդիթերի» կրիտիկան Նալպանտեան-քննադատի վերջին ու առաւել ամբողջացած գործն էր: Այստեղ նա շօշափել է բազմաթիւ խնդիրներ, որոնք դուրս են գալիս վէպի քննադատութեան նեղ շրջանակներից եւ շաղկապւում «Երկրագործութեան» հեղինակի ընդհանուր հայեացքների, եւ, մասնաւորապէս, նրան յուզող ազգային-հասարակական եւ ազգային-քաղաքական հարցերի հետ: Կարգալով բերդի խոնաւ եւ մութ պատերի արանքում կերտուած այդ էջերը՝ ընթերցողն այսօր իսկ հիանում է հեղինակի սահուն եւ յստակ լեզուով, տեսնում նրա դատողութիւնների լայնքն ու խորքը:

